ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

9.01.2020
344-20

ՀՀ Արարատի մարզպետ
պարոն Գարիկ Սարգսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սարգսյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել «Փաստինֆո» գործակալության լրագրող Սոնա Գևորգյանը՝ խնդրելով աջակցել տեղեկություն ստանալու հարցում: Լրագրողը դեկտեմբերի 23-ին տեղեկություն ստանալու հարցում է ուղարկել Արարատի մարզպետարան: Ստացված պատասխան գրությամբ սակայն Մարզպետարանը լիարժեք պատասխան չի տրամադրել:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները՝

1. 2019 թ-ի ընթացքում Արարատի մարզպետարանի քանի՞ աշխատակից է պարգևատրում ստացել, որքա՞ն է կազմել նրանցից յուրաքանչյուրին տրված պարգևավճարը:
2. Քանի՞ աշխատակից է 2019 թ.-ի ընթացքում պարգևատրվել 3 և ավելի անգամ: Յուրաքանչյուր անգամ որքա՞ն է այն կազմել:
3. Ամանորի կապակցությամբ 2019 թ-ին քանի՞ աշխատակից է պարգևատրվել և նրանցից յուրաքանչյուրին որքա՞ն գումար է հատկացվել:
4. Պարգևատրվե՞լ են արդյոք Ամանորի կապակցությամբ Արարատի մարզպետը, մարզպետի տեղակալները և աշխատակազմի ղեկավարը: Եթե այո, ապա որքա՞ն է կազմել պարգևատրման չափը:
5. Անցկացրե՞լ է արդյոք մարզպետարանը ամանորյա հավաքույթ: Եթե այո, ապա որքան գումար է ծախսվել և որ ռեստորանում են անցկացվել միջոցառումները, և ինչպես է ընտրվել այդ ռեստորանը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան